

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հունիսի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Պատգամավորական բարեկամության հայկական վեհաժողովի անդրանիկ նիստի մասնակիցներին՝ աշխարհի տարբեր երկրների խորհրդարանների հայազգի պատգամավորների ու այդ երկրների խորհրդարաններում Հայաստանի ԱԺ-ի հետ բարեկամության պատգամավորական խմբերում ընդգրկված ներկայացուցիչների:

Ողջունելով խորհրդարանականների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նորին Սրբությունը կարևորեց տարբեր երկրների միջխորհրդարանական համագործակցությունը, ինչին իր նպաստը կբերի ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի նախաձեռնությամբ ստեղծված Պատգամավորական բարեկամության հայկական վեհաժողովը: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ խորհրդարանների և Եկեղեցիների միջև սերտ հարաբերությունների ձևավորման անհրաժեշտությանը:

Հանդիպման ավարտին ներկաները հարցումներ ուղղեցին Վեհափառ Հայրապետին Հայ Եկեղեցու գործունեության վերաբերյալ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ԱՅԱՍ» ԾՈՎԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հունիսի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի անդամներին՝ Կարեն Բալայանի ղեկավարությամբ, ովքեր եկել էին ստանալու Նորին Սրբության օրհնութ-

յունը «Կիլիկիա» առագաստանավով նախատեսվող ծովային երկար ճանապարհորդությունից առաջ:

«Այաս» ծովային հետազոտությունների ակումբի անդամները Վեհափառ Հայրապետին հանգամանալիորեն ներկայացրեցին իրենց ճանապարհորդության ուղին և խոսեցին ապագա ծրագրերի մասին՝ հայցելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը ճանապարհորդությունից առաջ:

Նորին Սրբությունն իր խոսքում բարձր գնահատեց ակումբի անդամների ստանձնած առաքելությունը՝ այս կերպով վկայելու հայ ժողովրդի և Հայաստան աշխարհի մասին: Հայոց Հայրապետն իր բարեմաղթանքներն ու օրհնությունը բաշխեց նավի անձնակազմի ներկայացուցիչներին նավապետի գլխավորությամբ՝ աղոթք բարձրացնելով առ Աստված խաղաղ ու ապահով նավարկության համար:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հունիսի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գրողների համահայկական երկրորդ համաժողովի մասնակիցներին:

«Հայոց Եկեղեցին և հայ գրականությունը սերտորեն կապված են իրար: Ուրախ ենք արձանագրելու այն սերտ համագործակցության մասին, որ առկա է մեր մտավորականների և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջև»,- ողջունելով հյուրերին՝ ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ու օրհնությունները փոխանցելով գրողներին՝ կարևորեց հայ գրի և գրականության մշակների դերը հատկապես ազգապահպանման գործում: «Մեզ համար հաճելի է տեսնել, որ Հայրենիքի և Սփյուռքի մտավորականները համատեղ քննարկում են մեր ազգին ու Հայրենիքին հուզող խնդիրներ և փորձում դրանց լուծման ուղիներ գտնել: Այսօր առավել ևս կարևոր է ձեր դերը մատաղ սերնդի հայեցի կրթության և ազգապահպան հարցում: Ուստի Հայրապետիս աղոթքն է, որ զորացած հավատքով ու առավել նախանձախնդրությամբ լծվեք ձեր սուրբ առաքելության իրականացմանը»,- իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման ընթացքում, ՀՀ Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը խոսելով ապագա ծրագրերի մասին՝ նույնպես անդրադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ հարաբերություններին:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին: